# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ.,
շ.1, Հեռ. (098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 180
*30 մայիս 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 45- 46-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 45-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով ,ի կատարումն ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականի և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 14.04.2017թ. թիվ 101/107.4/2386-17 գրությունը՝
որոշում եմ.

1.2017թ.մայիսի 27-ին կազմակերպել շաբաթօրյակ:
2.Հանձնարարել համայնքի կազմի մեջ գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարներին,ՀՈԱԿ-ների տնօրեններին և բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝անկախ սեփականության ձևից.
1/շաբաթօրյակի իրականացման գործողությունների պլանի համաձայն,այդ թվում ներկայացված քարտեզագրված աղբանոցների վերացման ուղղությամբ կատարել համայնքի բնակավայրերի մաքրման և աղբահանության աշխատանքներ՝ տարիների ընթացքում կուտակված աղբից մաքրել շրջակա միջավայրը,
2/ ապահովել համայնքի բնակավայրերում աղբահավաքման և սանիտարական մաքրման համար անհրաժեշտ տեխնիկայի ներգրավվածությունը նշված աշխատանքներում:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի,<<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի և վարչական ղեկավարների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 46-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի գործադիր տնօրենի 2017թ.մայիսի 18-ի N 346 գրությունը՝ որոշում եմ.

1.Բավարարել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի գործադիր տնօրեն Ա.Կիրակոսյանի գրությունը և թույլատրել <<Այպոշին>> ՍՊԸ-ին կատարել Թումանյան համայնքում մեքենաների ծածկարանի և աղբամանների հարթակների կառուցման շինարարական աշխատանքները:
2.Շինարարական աշխատանքները սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3.Շինարարության թույլտվության համար համայնքապետարանի դրամարկղ մուծել 15000 դրամ:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**